№ 18. Մայիսի 17. 1873 Մայիսի 17. № 18.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ.

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով): Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ".

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (արծրունեաց տուն) և պ. Ցատուրեանցի խանութում:

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մանուար յայտարարութիւն ամեն տողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ ընդունւում են հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսերէն, գերմաներէն և թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շարունակենք.—Ներքին տեսութիւն. Քաղաքային վարչութեան ժողովները. Ով է մեղաւոր. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Նամակ Մէլիդինէից. Արտաքին լուրեր.—Խառն լուրեր.—Առևտրական.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Քանդած օջախ.

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ

I

Ով կարող է հերքել թէ պետական լեզուն հարկաւոր է պետութեան պատկանող ամեն քաղաքացուն:

Եթէ, օրինակ, ռուսաց լեզուն պետական էլ չը լինէր, մենք հայերս դարձեալ կը սովորէինք նրան, որովհետև նա միջնորդ լինելով մեր և եւրոպական գիտութեան մէջ, հարուստ կրթողական նիւթ է առաջարկում մեզ:

II

Ով որ խղճմտաբար կերպով ուսումնասիրած է հայի բնաւորութիւնը, կը խոստովանի որ հայերը մեծ ընդունակութիւն ունին դէպի լեզուների ուսումնասիրութիւնը և շուտով հասնում են նրանց ըմբռնելուն...հայը շատ անգամ կարողանում է օտար լեզուն մի և նոյն ճարտարութեամբ գործ ածել թէ գրութեան թէ խօսակցութեան մէջ ինչպէս և իր մայրենի լեզուն:

III

Այդ երևոյթը նշմարել են ամենքը, թէ օտար ճանապարհորդները, թէ գիտնականները: Դեռ մօտ երկու տարի սորանից առաջ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն պ. Նեվերովը խոստովանեց այդ ճշմարտութիւնը իր տարեկան հաշվի մէջ:

IV

Հետաքրքիր է հետազօտել թէ ինչ է այդ երևոյթի պատճառը:

V

Երբ որ երեխան իր սկզբնական ուսումը իր կազմվածքին ու իր ցեղական ծագման յարմար լեզվի միջոցով է ընդունում,—նա միշտ աւելի զարգացած է լինում մտաւորապէս և աւելի ընդունակ է լինում ապագայում ընդունել նոր հմտութիւնները և ուրիշ, օտար լեզուների ուսումնասիրութիւնը:

VI

Եթէ Ռուսաստանի հայը այդքան ընդունակ էր լինում շուտով և կատարելապէս ըմբռնել և գործ ածել օրինակ ռուս լեզուն,—այդ այն պատճառով է, որ նա իր սկզբնական ուսումը ընդունում էր մայրենի լեզվով: Եթէ տաճկաստանցի հայը տաճկերէն էր սովորում ու խօսում տաճիկի պէս,—այդ այն պատճառով է, որ նա տարրական ուսումը ստանում էր մայրենի, հայերէն լեզվով...

VII

Բացի այն յատկութիւնից որ ունի հայոց լեզուն հայերի վերաբերութեամբ, այսինքն որ նա մեզ համար մայրենի է, ուրեմն բնական և մանկավարժական կողմից կազմվածքի և ոգիի համար յարմար, ինչպէս ֆրանսիերէնը յարմար է ֆրանսիացու ոգիի համար, գերմաներէնը գերմանացու, յոյներէնը յոյնի, տաճիկերէն տաճիկի, վրացերէնը վրացու, ռուսերէնը ռուսի, հոլանդերէնը հոլանդացու համար,—բացի սորանից հայերէն լեզուն ինքն իրան վերցրած՝ հարուստ և զարգացման ընդունակ լեզուներից մինն է:

VIII

Հայոց լեզուն երեխայութեանից սովորելով, և նրա միջոցով տարրական ուսումնարանների ընթացքը անցնելով, հայ-երեխան նրա օգնութեամբ պատրաստվում է մեծ հեշտութեամբ սովորել ժամանակով և ուրիշ լեզուներ, ուրեմն աւելի դիւրին է լինում նրա համար սովորել և պետական լեզուն (որ նրան անհրաժեշտ է),—որովհետև հայոց լեզուն իր հնչիւնների հարստութեան, իր բարդ բառերի առատութեան, նոր տերմինները կազմելու հեշտութեան, իր քերականութեան մշակված և ճշմարիտ կլասիկական ձևերի կողմից ներկայացուցիչ է ճշմարիտ հնդկա-գերմանական մաքուր ծագման լեզուների:

IX

Այդ վկայում են Ֆրանսիացիները՝ Գիւլորիէ, Լանգլուա և գիտութեան այլ հեղինակութիւններ, իսկ գերմանացի ժամանակակից հայագէտներից մինը ասում է որ այդ յատկութիւնների կողմից հայերէնը եթէ չէ գերազանցում, գոնէ պակաս չէ գերմաներէնից:

X

Մինչև այն ժամանակ հայը ընդունակ կը լինի հեշտութեամբ ընդունել օտար լեզուների ուսումը, մինչև որ իր մայրենի լեզվով կը ստանայ սկզբնական, տարրական ուսումը: Իսկ այն օրից, որ նա այդ չի անի,—նա կը կորցնի իր այդ յատկութիւնը...

XI

Ուրեմն սկզբնական, տարրական ուսումը մայրենի լեզվով ստանալով, ես երկու կողմից էլ ընդունակ եմ դառնում՝ մի կողմից որովհետև ապագայում աւելի հեշտութեամբ կը սովորեմ օտար լեզուն, միւս կողմից որովհետև իմ մտաւոր կարողութիւնը աւելի բնական և կանոնաւոր կերպով կը զարգանայ: Ուրեմն ես երկու կողմից էլ օգտաւէտ եմ դառնում՝ մի կողմից իմ անձի համար օգտաւէտ, որովհետև ժամանակով աւելի հեշտութեամբ կըմբռնեմ պետական լեզուն, իսկ միւս կողմից, որովհետև մտաւորապէս աւելի կանոնաւոր կերպով զարգանալով, ես աւելի զարգացած կը լինեմ, ուրեմն պետութեան ընդունակ և օգտաւէտ քաղաքացի կը դառնամ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Մայիսի 7-ին սկսվեցան Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ ընդհանուր ժողովների նստերը: Նախ քան սկսենք միւս համարներում մի առ մի քննել այն հարցերը, որք առաջարկվեցան պատգամաւորների ընդհանուր ժողովին և նրա քննութեան ու վճռի առարկայ դարձան, աւելորդ չենք համարում մէկ երկու խօսք ասել այն տպաւորութեան մասին որ ունեցաւ մեզ վրա ժողովի կազմակերպութիւնը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՔԱՆԴՈՒԱԾ ՕՋԱԽ»

I

Ապրիլի 19-ին սիրողների խումբը առաջին անգամ ներկայացրին ձմեռնային թատրոնում պ. Սունդուկեանցի «Քանդուած օջախ» անունով նոր կատակերգութիւնը. Որպէս սիրողների վերա, ես աւելորդ եմ համարում խօսել, թէ նրանցից ամէն մինը որպէս կատարեց իր դերը, միայն չէ կարելի մի քանի խօսք չասել տաղանդաւոր հեղինակի այդ նոր պիեսայի բեմական արժեքի և նորա կրթողական նշանակութեան մասին:

«Քանդուած օջախը» որպէս մեր այժմեան հասարակական կեանքի մի պարզ հայելի, ցոլացնում է իւր մէջ մի տխուր երևոյթ, որ պատկերացնում է նորա թէ տնտեսական, թէ բարոյական և թէ մտաւորական ընդհանուր բանկռօտութիւնը—նորա անկումը:

Մի կողմից, առևտրական գործը,—հայի ապրուստի գլխաւոր աղբիւրը, կայանալով խախուտ, փտած և անհաստատ հիմքերի վերա,—չէ տալիս բաւականացուցիչ արդիւնք փոքր ի շատէ իւր գործը խղճմտանքով վարող վաճառականին: Միւս կողմից, ընդհանրացած շռայլութիւնը, ընտանեկան անկարգ տնտեսութիւնը, մոլութիւնները դէպի նորաձևութիւնը՝ անխնայաբար խլում են, սպառում են գերդաստանի աշխատաւորի դառը քրտինքի արդիւնքը, և նա, թէև այդ բոլորը հասկանում է, թէ և աշխատում է ընդդիմադրել նորանց, բայց կամայ ակամայ ենթարկուած լինելով ընդհանուր շռայլութեան հոսանքին, չէ դիմանում և վերջապէս ընկնում է: Այդ սարսափելի դրամատիկական պատկերը կեանքի և մահուան մեք տեսնում ենք Օսէփի տիպի մէջ:

II.

Օսէփը երևակայական տիպ չէ:

Նորա մէջ կայ հասկացողութիւն և համոզմունք. նորա մէջ կայ կամք և հաստատամտութիւն. մի խօսքով, նա թոյլ բնաւորութիւն չէ: Այսու ամենայնիւ, նորա ազդեցութիւնը իւր գերդաստանի վերա ստանում է բոլորովին թոյլ կերպարանք, երբ նա, մի կողմից չփոթուելով իւր արտաքին գործերի անյաջող հանգամանքներից, միւս կողմից, տանջվում է ընտանեկան երկպառակութիւններով: Վերջին երևոյթը աւելի խոշոր կերպարանք է ստանում այն ժամանակ, երբ նորա աղջկան, Նատօին ուզումեն ամուսնացնել: Օսէփի կինը, Սալօմէն, չը գիտէ և չէ էլ ցանկանում գիտենալ իւր ամուսնի դժբախտ դրութիւնը, նա պահանջում է իւր մարդուց մեծ բաժինքով իւր դուստրը չինովնիկի կին լինել. Օսէփը մանրամասնաբար պատմումէ Սալօմէին իւր վիճակը, թէ նորա պահանջմունքը վեր էր իւր կարողութիւնից, այլ և խորհուրդ է տալիս, որ աւելի յարմար է իւրեանց դստեր ապագայ բախտաւորութեանը լինել մի համեստ և աշխատաւոր վաճառականի կին, որ կը բաւականանայ փոքր բաժինքով, քան թէ մեծ բաժինքով գնալ որ և իցէ կրպանը և գլուխը դարտակ չինովնիկին: Բայց կինը այդ ընտանեկան կռուի մէջ տանումէ յաղթութիւնը: Նատօն նշանվումէ Ալեքսանդր Մարմարով չինովնիկի վերա:

Աներևական մի երևոյթ է թւում այդ, որ հայ տղամարդը, դարերով կնոջ վերա տիրող և նորան ստրկացնող բռնակալը, յանկարծ ենթարկվում է նորա ազդեցութեանը: Բայց հեղինակը չէ սխալուել այստեղ, նա որսացել է մեր այժմեան ընտանեկան կեանքից ամենազգալի մի գիծ: Այստեղ երևումէ մեր առաջնոր քաղաքակրթուած հայ կնոջ տիպը, որ ինչպէս ինքը Օսէփը բացատրումէ «վուտեմէն ինչբու բօղազը փանդասնու է ու գլուխը կի էլի էն է մնացի»: Հայ կինը, արտաքին ձևերով նմանելով եւրոպայի կնոջ օրինակներին, առանց նոցա կրթութիւնը և ուսումը իւրեան սեփականելու, միայն լինումէ մօդայի և մօդնի մագազիններին գերի, դառնումէ անընդունակ իւր տղամարդի հետ լծորդաբար տանել ընտանիքի ծանրութիւնը, բաժանորդ լինել նորա բախտաւոր և անբախտ րոպէներին. Օսէփը թէ և ինքը ուսում առած մարդ չէ, բայց նա արտասահմանում տեսել է, թէ որպէս կանայք օգնում են իւրեանց տղամարդներին և հասարակական գործիչներ են դառնում: Բայց հայ կինը միայն մտածում է բալերի, վեչերների, պիկնիկների և լոտօի վերա: Այդպիսի կապրիկութիւնները եւրոպական ձևերի միայն վատ կողմերն սովորելու, առանց նոցա գիտութեանը և ուսմանը մասնակից լինելու, տալիս է Սալօմէին մի դարտակ և վայրի վերոյ բնաւորութիւն: Նա փոխադրում է իւր անձի վերա այն, ինչ որ մի ժամանակ նորա տղամարդն էր,—պարզ ասած, լինումէ մի նոր բռնակալուհի տան մէջ: Այսպիսի վնասակար և այլանդակ վերանորոգութիւնը ընտանեկան կեանքի մէջ յիշեցնել է տալիս սրբազան նահապետականութիւնը, այն անցած, գնացած պարզ և անհոգ օրերը, որոնց երանի տալով միտքն է բերում մահիցայ խախօն, Օսէփի հօրաքոյրը: Պառաւի յիշողութեան մէջ զարթնում է ոսկի անցեալը, երբ ամէն մարդ սակաւով էր բաւականանում, երբ ամէն մարդ գոհ էր իւր վիճակէն և ընտանիքը երջանկութիւն էր վայելում:

III.

Նատօի, Սալոմէի աղջկայ կրթութիւնը, նորա ուսումը՝ բոլորովին համապատասխանում է այն շրջանին, որոյ մէջ զարգանում է նա: Այստեղ մեք տեսնում եմք այն տխուր պատկերը, որով ներկայանում է մեզ այժմեան կրթուած հայ աղջիկը: Նորա մէջ չէ երևում մի հաստատ բան, ամէն ինչ նորա մէջ թեթև, թերի և անկատար է, որպէս այն ուսումը և կրթութիւնը, որը ստացել է նա: Նա ոչինչ գաղափար չունի իւր դրութեան բուն նշանակութեան մասին, նա անտարբեր է դէպի իւր ազգը և կրօնը, նա մինչև անգամ ատում է իւր մայրենի լեզուն: Ամուսնական գաղափարը զարթնում է նորա մէջ բոլորովին դատարկ չարժառիթներից. չինովնիկի կին լինելով մըտածում է Նատօն, աւելի հեշտ միջոցներ կունենայ կլուբ (կրուժոկ), թատրոն և այլ զուարճութեանց տեղերը յաճախելու և ամէն օր մի նոր շլեյփ տալու իւր հագուստին ու զարդարանքներին: Այդպիսի դարտակ բնաւորութիւնը, որպէս է Նատօն, չունի իւր մէջ մի կենդանի կայծ, որով գրաւէր դէպի ինքը փեսաներին, միակ կապիտալը, որով նա կարող էր իւր համար փեսայ ընտրել, լինում է արծաթը և այդ նիւթի վերա տրվում է նորա ամուսնական կեանքի հիմքը: Նորա ճակատագիրը կապվում է իւր նման մի երիտասարդի հետ, որպէս էր Ալեքսանդր Մարմարովը: Վերջինս չունէ իւր աչքի առջև որ և իցէ անձնական արժանաւորութիւնը Նատօի, միակ բանը, որ գրաւում է նորան դէպի Նատօի սէրը, է այն քանի մի հարիւր թուման փողը, որ պիտի ստանայր նա որպէս բաժինք: Այդ պատճառաւ, Օսէփի անակնկալ դժբախտութեան հետ, երբ քանդվում է նորա բոլոր նիւթական զօրութիւնը, նորա հետ և վերջանում է Մարմարովի սէրը դէպի իւր հարսնացուն, երբ նա մտածում է, թէ այլ ևս ոչինչ ստանալու յոյս չը կար: Փողի հաշիւը,